

վայելողն իսկ ոչ լիկ յընդհանուր լոյս գիտութեանց՝ այլ և ամենալոյս և սուրբ կրօնից, զորօրինակ է տեսանել զայդպիսիս 'ի դրունս ԻՒ. ՃԼԸ. ՄԽԸ. ՄԿԴ. ՄՀԳ. ՄՂ. ՄՂԳ., և այլն: Առաւել քան զայդոսիկ գտանէին ուրեք և իսպառ անպատեհ խտիրք և հնարք, զորս պատշաճ համարեցաք թողուլ 'ի բաց, կիտադրութեամբ միայն նշանակեալ զտեղին: Բայց յիշատակ և կոչումն դից կամ այլ ինչ հեթեթանք հեթանոսական հաւատոց և պաշտամանց՝ բնաւ չերևին և յայժմեան բնագրին, յորմէ գուշակի ընդ քրիստոնեայ ձեռս անցեալ և մաքրեալ: Ազգ առնէ և Փոտ թէ գտանէին և յօրինակին զոր ինքն ընթեռնոյր՝ անհաւատալիք և սուտ սքանչելք, յորոց զգուշանալ թեղադրէ, և յերկբայականս՝ հետեւել լեւոնի կամ լէոնդինու, որ թուի կոչեցեալն Լադիկիոս 'ի մերոյս (եթէ չիցէ սա վարդոն), արաբացի աղաւաղանօք անուանն. և ոչ է յայտ ո՛ր և յորում կացեալ դարու, թէպէտ և ոմանց թուեցաւ առ Յուստինիանոսիւ կայսերաւ 'ի Զ դարու:

Իսկ մեք զկարօտ լուման մատենին և զպայտութեան թարգմանչին, համարեսցուք ընդ այժմիկ՝ ոչ փորը մասամբ, եթէ ընդունելութեամբ և իւրք իւրք կիրառութեամբ մերազնեից՝ պատուեացին այս Գիրք վաւարակոց, հանդերձ և հրատարակողացն դոյզն ինչ վաստակօք:

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶՔ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԹԱՆԱՄԵՒՅ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆՆ. ԵՒ ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆ ՆՈՐ

ԿՏԱԿԱՐԱՆԻՆ

Զկայ յաշխարհիս գիրք մը որ այնչափ գրուածոց պատճառ. եղած ըլլայ, ինչպէս Աստուածաշունչ գիրքն, թէ կրօնական, թէ լեզուաբանական, թէ ուսումնական և թէ մատենագրական տեսութեամբք. և ցայսօր իսկ չի դադարիր ներկայ քննադատական արուեստն երբեմն երբեմն խայթել ուղղափառ. և ողջամիտ արանք կարծիքը՝ սոյն Գրոցս այս կամ միւս մասին վրայ: Բայց մեր նպատակն չըլլալով կարծեաց տեսութիւնքն, կ'ուզենք աւելի այդպիսի հրաշալի գրոց վրայ աշխատող մատենագրաց անուանքը ծանօթացնել մերայոց. և մեր հրաշալի թարգմանութեան վրայ քանի մը մանր ծանօթութիւններ նշանակել. ջանալով միանգամայն որ շատ անգամ խօսուած և ըսուած բա-

ներն չկրկնենք 'ի ձանձրութիւն բանասէր անձանց:

Զկայ թերեւս ոչ ազգ մը և ոչ լեզու, որ այսօր չունենայ այդ գրոց թարգմանութիւնք. բայց հնասէր անձանց քաղցրագոյն է միշտ հնութեան սրբազան քողոյն պատկառ կենալ, և չմամսիլ եսթիլական Յովին՝ որ ծածկեալ գանձ մը յայտնելով՝ կամ վարդ քողը վերջնելով՝ աշխարհիս վրայ մահը պատճառեց. շատ անգամ այսպիսի մանր կարծուած պատրուակ մը կրնայ մահառիթ ըլլալ հետաքննողին: Ուղղափառք և ոչ նոյնպիսիք շատ աշխատած են այսպիսի ազնուական գրոց վրայ, բայց շատ անգամ քննադատից վճիռքն կախ մնացած ժամանակ իսկ՝ ռամկին կամ հասարակաց միաբեր աւելի յան-

դուքն կը գտնուի ասպարէզն ընդար-
ձակելու. թող թէ՛ երբ գիտունք նախ
այդպիսի ճամբայ հորդեն, Մեր գոյզն
և փոքր տեսութիւնքն աւելի մեր նախ-
նեայ արդիւնքը բարձրացնելու վրայ
պիտի ըլլայ սոյն գրոցս նկատմամբ.
յետ յիշելու համառօտիւ նաև Գրոցս
սկզբնական վիճակը:

Գիտէ՛ ամենայն ոք որ մեր Աստուա-
ծաշունչ կոչած մատեանն կամ Կտա-
կարանքն, կոչուին Հին և Նոր. հինն
միայն՝ հրէական կրօնից հիմնական ա-
ւանդապահն է, իսկ Նորս քրիստոսա-
կան կրօնից առաջին երկունքն՝ զոր Ա-
ռաքեալքն երկնեցին Քրիստոսի մեր
Փրկչին բերնէն լսած վարդապետու-
թեամբքն: Հինն՝ իր հնուիական կնքովն
հարկաւ աւելի ասպարէզ պիտի տայր
քննադատ մտաց, ինչպէս նաև եղած
ալ է. յննդոց առաջին էջն արդեօք
որչափ յուզմանց պատճառ չեն եղած,
և թերևս շատ անգամ ալ անօգուտ և
ընդ վայր. չեղան արդեօք այնպիսի աչք
ալ որ Մովսիսական գրոց մէջ կրկին
հեղինակաց զրիչ և ոճ նշմարեցին.
միթէ՛ թեթեւ հմտութեան գործ պէտք
է համարինք այս զանազան գրոց դա-
սակարգութիւնը, որոշել իւրաքանչիւ-
րին դարուն և ժամանակին ոճը: Ալ
բարձրագոյն թեկնով. արդեօք Ս. Գրոց
ամենայն խօսքերն և բառերն ալ առ-
տուածաշունչն պէտք է կարծել, ինչ-
պէս կը վկայեն և կը հաստատեն Երա-
նոս, Կղեմէս Ալեքսանդրացի և Ագոս-
տինոս, և ի նորոց բազումք: Զայս՝ աս-
տուածաբանութեան և աստուածաբա-
նից թողլով, ո՞վ կրնայ ուրանալ որ միւ-
սիսական ծնունդքն ցայսօր տառապե-
ցնէ շատ գիտնոց զուխները, որոնք
հանդերձ բնագիտական հմտութեամբք
կը հարկադրին խոնարհիլ այս ահեղ
հնութեան առջև. ինչ հնութիւն որ ալ
տանք և որչափ ալ նուազեցունենք այս
գրոց ժամանակագրական թիւը, սա-
կայն չենք կրնալ ուրիշ մատենագրու-
թիւն մը ցուցնել երիցագոյն քան
զայս, թէպէտ Գրոցս արդի հմտութիւնն
հնարել ու ստեղծել քան զայն հին եր-

կասիրութիւն մը, որչափ ալ մաղելու
ըլլայ յոյն և հնդկ մատենագրութեան
խերշտանքն:

Իրաւունք ունէր Լինգինոս փիլիսո-
փայն զմայելու աստուածաշնչական
գերագոյն մեծվայելութեանն, որով
արարչագործն կը սկսի իւր վսեմական
զբանչելաց երկունքն. «Ասաց աս-
տուած. եղիցի լոյս. և եղև լոյս»: Եւ
որ էջն արդեօք կը պակսի այս մեծա-
զոր գեղեցկութենէն. ահա Մարգա-
րէութիւնն Եսայեայ ընդ Հովերոսի շատ
անգամ բաղդատուած է՝ ընտիր ճաշակ
և ըննադատութիւն ունեցող անձանց-
մէ: Բոլոր իսկ մարդարէական զրեանք
առանձին առանձին խանդել և աշխու-
ժիւ կը գերազանցեն զիրար. պատմա-
կանք՝ իրենց պարզութեամբն, բարո-
յականք՝ իրենց սուրբ և ճշմարիտ ուղ-
ղութեամբն, իւր այս զարմանազան գրք-
չաց երկոց մէջ շատ անգամ ուշ չեն
կրնար դնել ընթերցողք՝ սոյն գրու-
թեանց հեղինակաց վրայ քննութիւն
մ'ընելու. այլ շատ կը համարին լե-
զուին ու իմաստից քաղցրութեամբն
զմայլեալ միշտ յազենալ և դեռ քաղց-
նուլ: Բայց մենք բաւական համարելով
ըսածնիս՝ տեսնենք թէ պատմութիւնն
ինչ կ'աւանդէ այս գրոց վրայ:

Զանազան պատմաց գործ ըլլալով,
հարկաւ զանազան ժամանակ ալ եղած
պիտի ըլլայ ասոնց գրութիւնն, յորում
ահա կը կայանայ ուրիշ մեծ գծուա-
րութիւն մ'ալ այս գրոց քննութեան
նկատմամբ. սակայն գործոյն միու-
թիւնն և ամբողջութիւնն կը տրուի
եզրի՝ եզր, իբրև գիտուն և անդեակ
օրինաց՝ հաւաքեց և կարգադրեց այս
գրեանքն, որոնք ի հրէական ժամա-
նակաց կրկին դասաւորութեան բաժ-
նուած են, ի նախակառնու և յեր-
կրորդակառնու. կայ ասոնցմէ դուրս
ուրիշ մաս մ'ալ որ կուրի Յայտնու-
քիւնք, զոր Եւրոպացիք յունական
ձայնիւ կը կոչեն Apocryphes, որոնց
վրայ թերևս առիթ ունենանք խօսելու
ուրիշ անգամ: Արդ նկատմամբ այս
գաղաւորութեանս, զոր կամաց կամաց

ժամանակաւ կարդաւորեցին եկեղեցին և եկեղեցւոյ հարք, կը դնէր սյս տեղ Հայկական ձեռագորաց մէջ գըտաւ երկարագոյն յառաջարան մը թագաւորութեց գորոց, յորում կը խօսուի երրայական գորոց չարքին և անոնց անուանց վրայ. « Վասն 'ի յերկուս գիրս առ 'ի Հերայեցւոց զպատմութիւնսն բաժանելոյ. զի քսան և երկու նշանագրօք վարին երբայեցիք, ըստ Ասորւոց և Քաղզէնացւոց լեզուին նշանակաց. քանզի նոքա յոլովագոյն մօտ են յերբայեցւոց բարբառն, և զոյգ նշանագրօք վարին՝ բարբառեալ նոյնպէս, բայց գրեն այլափոխ նշանագրոյմիւրք. և ոչ միայն, այլ և Սամարացիք զմովսիսեան հինգ օրինաւորն քսան և երկու նշանագրօք գրեն, կերպարանք միայն և խեցիւեղեփօք այլափոխեն: Իսկ բազումք պնդին թէ որպէս թէ ճմարիտ իցէ բան ելլի դպրի և շինապատմի, յետ առնելոյ զյիշուածդէմ, և վերստին տաճարին 'ի Զօրաբաբելէ շինելոյ, այլ նշանագիրս երբայեցւոց ցուցանել, թող զառաջինսն, որովք մինչև ցայնժամ վարէին. քանզի նոյնպիսիս ըստ Սամարացւոցն և երբայեցւոց հասարակ, և նոքա նկարագրոյմն նշանագրաց ունէին զառաջինն: Նաև 'ի գիրսն թուոց նոյն քսան և երկու նշանագիրքն գրին դտանին. և խորհրդեամբ զ'լետացւոց և զբահանայից ցուցանեն զգումարութիւն. նաև զչորեքգրեան՝ զանունն Տեառն ուրեք ուրեք 'ի յունարէն գիրս տակաւին և այսօր 'ի հին օրինակս գրեալ գտանեմք. նոյնպէս և 'ի Սաղմասն գերեսներորդ վեցերորդն և զհարիւրորդ ութուստաներորդն, և զհարիւրորդ քառասներորդ չորրորդն, թէպէտ և այլափոխ չափովք գրեալ տեսանեմք, սակայն նովին թուով նոյն նշանագրաց կարգեալս և եղեալս գտանեմք. նաև զՈղբսն երեմիայի և զաղօթս նորա. ևս և զմօտ 'ի կատա.

րած առակացն Սողոմոնի՝ յորմէ վոյրէ ասէ. թէ՛ կին ժրագլուխ ո՞ գտանիցէ, նովին նշանագրօք և նկարագրոյմիւրք զատուցեալս է գտանել. և հինգ գիրս առ 'ի նոցանէ կարծի թէ կրկին իցէ. քափն, մեմն, նունն, վըն, սադէն. և այսու նշանագրօք այլազգ 'ի սկըղբանն՝ յորժամ գրեն՝ վարին երբայեցիք, և այլազգ 'ի միջոյի, և այլազգ 'ի կատարածի. վասն որոյ և հինգ գիրքն առ 'ի բազմաց կարծեցան լինել կրկին, Սամուէլին և Մազքիմայն և Դաբարիովմայն և ելզրին, և երեմիային հանդերձ Ողբովքն: Արդ որպէս ցուցաւ թէ քսան և երկու նշանագիրք են որով գրեալ ամենայն ինչ երբայեցերէն յառաջ եկեալ բարբառով հասանի, նոյնպէս և քսան և երկու գիրք աստուածակերտ գումարութեանն թուին ընդ ամենայն՝ ըստ նշանագրացն. որ խելամուտ առնեն ուսուցանել զԱստուծոյ և զազանուապաշտօն լինելոյ, առ 'ի խրատելոյ զտակաւին զմատապագոյն և զկաթնուկեր բարս առն արդարոյ: Արդ թուեն երբայեցիք զգիրս՝ զայս ձև օրինակի. զառաջինն անուանեն Բրեսիթ՝ զոր մեքն Արարածս կոչեմք. և զերկրորդն՝ եղլեսմովթ՝ զոր մեք Նլս ասեմք. և զերրորդն՝ Որդիկերայ՝ զոր մեք Ղև տակաւն անուանեմք. և զչորրորդն՝ Նուարեղ-դաբեր՝ զոր մեք թիւա ասեմք. և զհինգերորդն՝ Դաբարիս, զոր մեք երկրորդումն օրինայ կոչեմք: Սոքա հնգեքեան են գիրք Մովսեսի, զոր ճըլմարտիւ երբայեցիք օրէնս անուանեն: Եւ երկրորդ գումարութեանն առնեն սկիզբն և թուեն զգիրս Յեսովայ որդւոյ Նաւեայ որ առ Հերայեցւոց Յովսուեբեն անուն անուանի. ապա զՍոսթիմն որ է Դատաւորայն, և 'ի նոյն յարեն զՀուլթ, զի որ ինչ 'ի ժամանակս դատաւորայն եղև՝ պատմէ: Եւ երրորդ՝ Սամուէլ, զոր մեք յառաջին և յերկրորդ թագաւորութեանցն համարեմք. և չորրորդ՝ զՄազքիմ՝ որ է թագաւորութեանց, սր յերրորդում և 'ի չորրորդում թագաւորութեանց կատարի: Բայց առաւել ճմարտագոյն է

1 Աստուծոյ անուն Ենեւ և կոչուի յերբայեցւոց և գրուի չորս տառեր, որով և կոչուի Ենեւ:

Մազաբիմի, այսինքն է թագաւորաց կոչիլ քան զՄազաբովմն՝ որ նշանաւ կէ թագաւորութեանց. քանզի ոչ եւ թէ զայլ և այլ ազգաց զթագաւորութենէ նշանակէ խմբագիրն, այլ զմիոյ՝ զիսրայելականէն, որ՝ ի վերայ երկոտասան ցեղիցն սահմանեալ էր։ Հինգերորդ՝ զԵսայեայն. վեցերորդ՝ զԵրեմիային. եօթներորդ՝ զԷզեկիէլին. ութերորդ՝ զԵրկոտասան մարգարէիցն, զոր թարգմասարն կոչեն։ Եւ երրորդ դարձեալ գումարութիւն երբայեցւոց՝ յոր զարգադիրն կարգեն. և այնր առաջին զՅորգնեն, և երկրորդ՝ զԴաւիթ, երրորդ՝ զՂուակացն, զոր նոքա Մասաղովթ կոչեն, և չորրորդ՝ զԵկեղեհաստէն, զոր նոքա Սահեղէթ անուանեն, և հինգերորդ՝ զՈրհնութեանն Օրհնութեանց, զոր նոքա Սիրաթսիրիմ՝ կոչեն. վեցերորդ՝ զԴանիէլին, եօթներորդ՝ զԴարբէխովմինն, որ նշանակէ՝ զբանս աւուրց, բայց յայննագոյն ասիցէ ոք պատմութիւն ժամանակական, որ Գիրք Մնացորդայն անուանին, և զերկուսն ողջ ապրեցուցանէ ի մէջ. ութերորդ զԷզրին, (և այն առ ի Յունաց և ի Հռովմայեցւոց յերկուս գիրս բաժանեալ է). իններորդ՝ զԵսթերայն. Եւ այսպէս գումարին միանգամայն հնոյ օրէնսգրութեանն Գիրք քան և երկուք ընդ ամենայն. Մովսէսի՝ հինգ. Մարգարէից՝ ութ. Սրբագրացն՝ ինն. բայց ումանք զՀռութ և զԿիսկովթ ընդ մարգարէան կարգեն, և ընդ նոսին համարին, զի այնու Վարածցեն զհնոյ օրէնսգրութեանն քան և չորս գիրս թուել։

Այս յառաջաբանս, զոր ի նախնեաց ձեռագրաց հօս կարգեցինք, թերևս նոյնն ըլլայ, զոր կը յիշատակէ թագաւորութեանց նախադրութեան շարագրողն, և կ'ըսէ. «այլ զի երբայեցիք յերկուս գիրս բաժանեն զգիրս թագաւորութեանցս, և այլք ի չորս, գտցես զայս ի յառաջաբանի անդ հնոցն, զոր ես կարծեմ գոյ Որդիին, որ յոյժ հրմուտ էր երբայեցւոյն»։ Այս էր ասհ հնոց դասաւորութիւնն, զոր յետ և եկեղեցին ընդունեցաւ, փոքրիկ յաւե-

լուած կամ փոփոխութիւն ընելով ըստ պատշաճի իրաց։

Բայց շատ անշնար կը մնար գրոցս յարգը, եթէ չունենար այն փասաւոր դէպքը, որով նոր դար մը կազմուեցաւ հրաշալի մատենիս, և որուն նմանութիւնը ռոսն առ ռոսն անցաւ առ այլս։ Պտղոմէոս Բ, որ յորշրջեցաւ Եղբայրասէր (285-247 Ն. Բ.), առաջին պատիւն ունեցաւ այս գրոցս թարգմանութեան գորազուրկ կազմելու. բայց շատ մը առաւապելք միջացուցած են այսպիսի գործոյ մը իրականութեան հանդամանքը, մինչև որդի քննադատ միտք ստիպուած են շատ բան թեթեւեմով մերժելով իսպառ կամ այլով մեկնութեամբ պարզելով։ Արիստէոսի մը աշունն՝ որ կերպով մը Եօթանասնից թարգմանութիւնը սրբազանացուցած է, այսօր ստեղծեալ անուն մը կը համարուի, և այդ անուամբ մեր ձեռքն ունեցած պատմութիւնն աղեքսանդրացի Հրէի մը գործ կ'ըլլայ, որուն չափ հաւասար կ'ընծայեն Յովսէպոս, և ոմանք ի հարց եկեղեցւոյ։ Իսկ Եօթանասնիցն կամ Եօթանասուն և երկու անձինքն ոչ թէ թարգմանչաց թիւն ըլլայ, այլ մանաւանդ աղեքսանդրեան Եօթանասնից ատենին քննութեամբն ըլլալուն պատճառաւ՝ Եօթանասնից թարգմանութիւն կոչուած։ Իսկ հրաշապատում արեւելեայք շատ ուրիշ մանր պարագայք ստեղծած են՝ այս գործս հրաշայեցելու համար, մինչև նաև այդ Եօթանասնից անուանիքն աւանդած են մեզի։ Պտղոմէոսի ռուսմանատենի փափաքը արծարծող գիւմանագէտն կ'ի-

1 Այս անանց անուանքը կ'աւանդէ մեզ նաև Արիստէոսի պատմութիւնն, բայց մեզ մեր նախնեաց գրողներէ մը գտնելով կը գտնէք այս տեղ. «Այս են անուանք չորս թարգմանչացն. իսրայելէ։ Ի յեղէն Ռուբենի, Յովսէպոս, Եզեկիս, Նեղեհոս։ Ի յեղէն Հմաւոնի. Յուդաս, Սիմոն, Սամէոս, Աղէոս, Մատթիաս, Նեղեհոս։ Ի յեղէն Ղուկաս՝ Նովմաս, Յովսէփոս, Թէոդորոսիս, Բիսմէկ, Որիմաս, Դակ. Ի յեղէն Յուդայ՝ Յովսէփոս, Աբէոս, Նեղեհոս, Կլաս, Զաքարիաս, Բեղկիս։ Ի յեղէն Իսաքայ՝ Իսկոս, Յակոբէոս, Նեղեհոս, Մաթաթիոս, Սիմէոն, Ղուկաս։ Ի յեղէն Զարգոնի՝ Յուդաս,

մացունէ թագաւորին որ իր ժողոված
գրատան մէջ կան « չորք բիւրք և ութ-
հարիւր մի աւելի կամ պակաս » . բայց
կը յաւելու ևս , թէ « լսեմ թէ աւելի
գիրք գոն յախարհի 'ի կողմանս Եթէո-
պացոց , Հնդկաց և Պարսից և Ելիմացոց
և Ատրեստանեաց և Բարելացւոց և
Քաղզէացւոց , առ Հոմայեցիս և փիւ-
նիկեցիս , յեյլադա , այլ և յերուսաղէմ
և 'ի Հրէաստանի գոն տատուածային
գիրք մարգարէիցն , որ պատմին վասն
Աստուծոյ և աշխարհադործութեանց ,
և այլ ամենայն հասարակաց օգտու-
թեան վարդապետութիւն » : Կը հաս-
նին Պողոմեայ թագաւորին կրկին
թուղթքն առ Հրեայս , և անոնք եօթմա-
նասուն և երկու հոգի « թարգմանիչս
ընտրեալս 'ի վարդապետացն Հրէից »
դրկեցին առ թագաւորն , « առ վեց այր
'ի մի ցեղէ » , կ'ըսէ պատմութիւն մը¹ :
Չասոնք առնելով թագաւորն կը հրա-
մայէ որ դնեն փարան կողին « յանդի-
ման Ալեքսանդրի , ուր շինեաց 12 սե-
նեակ , երկու երկուարգելեալս յայգուէ
մինչև ցերեկոյն զնոսա երեկոյ 'ի նա-
ւական հանեալ և անցուցեալ յայնկոյս
յապարանսն Պողոմեայ թագաւորի , և
ընդ նմա ընթերլ . և նոյնպէս երկու եր-
կու 'ի միում անկողնի ննջել , զի մի
կարասցեն խորհել ընդ միմեանս , այլ

Յովսէփ , Սմեոն , Չաբարիս , Չամբղոս , Սա-
մանա : Ի ցեղէն Գադայ , Սառէաս , Սեղեկիսս ,
Յակովքոս , Իսաքոս , Եսայիաս , Կաթէատ : Ի
ցեղէն Ասերայ՝ Թէդոտիոս , Յովաննէս , Յով-
նաթան : Ի ցեղէն Իսայայ՝ Թէոփիլոս , Արուս-
միս , Ալեանաս , Ասոն , Մեղեմիաս , Իսնէկոս :
Ի ցեղէն Կեփթաղիմայ՝ Երեմիաս , Եղեալա-
րիոս , Կաստրիս , Բէնէաս , Եղիէոս : Իա-
թէոս : Ի ցեղէն Յովսէփայ՝ Սամբղոս , Յովսե-
փոս . Յուգաս , Անաթանէս , Քաղէք , Իոսիթէոս :
Ի ցեղէն Բէնիամինի՝ Իսաղոս , Իովաննէս , Թէո-
գոսիոս , Արսէրման , Երէւոս , Եղէկէոս : Այս
են անուանք 26 թարգմանչացն՝ զոր արար Պողո-
մէոս թագաւորն 'ի Փարսն կղզին :

1 Ի Հայ գրչագիրս կը գտնենք գարձեալ
փայտի և պակասաւոր պատմութիւն մը , մակա-
գրեալ « Վասն Պողոմեանցն պատմութիւն թէ
որպէս ժամանակս թագաւորեցին յետ Ալեք-
սանդրի մահերանցուոյ » , որուն բուն օրինակն
կը պահուի 'ի Փարսիկէան տաճարնի մասանա-
գարանին :

առանց իրերաց գիտելոյ թարգմանեա-
ցեն » : Իսկ սենեկաց պատուհանն « 'ի
ձեղուանէն բացաւ , և ոչ 'ի կողմանէ » :
Եւ յետ թարգմանութեանն , հանեցին
թագաւորին առջև , և կարդալով մէկն՝
միւրքն ուշ կը դնէին , և « ոչ գտաւ ,
կ'ըսէ պատմիչն , ամենին երկրանու-
թիւն » : Այս սյուպիսի կերպարանա-
լիսիութիւն մը ընդունած է Եօթմասու-
նից թարգմանութեան պատմութիւնը .
սակայն արդի քննադատութիւնը շատ
հեռու է , ինչպէս վերը ըսինք , այսպի-
սի զարգարանաց հաւատք ընծայելէն .
այլ մանաւանդ զանազան թարգմանիչ
կը ճանչնայ իւրաքանչիւր գրոց առան-
ձին . այլ հնգամասեանն , այլ Մնացոր-
դաց և այլ մարգարէից , այլ Յորայ և
այլ թագաւորութեանց . իսկ զԵսթե-
րայն կը համարի՝ ոչ Եղբայրասիրին
ժամանակն թարգմանուած , այլ Պողո-
մեայ Զն՝ ժամանակ՝ որ կոչեցաւ փիլո-
մետոր (181-146) , ինչպէս կը հաստա-
տէ բազմահմուտն Ուստերիոս՝ նոյն գրոց
վերջերը գրուած փոքր յիշատակարանէ
մը քաղելով . « Յամին չորրորդի թա-
գաւորութեանն փողոմեայ և Կլեո-
պատրայ , եմոյծ Դովսիթէոս քահանայ
և Ղևտացի , և Պողոմէոս որդի նորա ,
զազնուական գրեալ հրովարտակն՝ ըզ-
փորեանն , որ անուանի Լիսիմաքոս
Պողոմեայ , այն որ յերուսաղէմ » . և
թէ հոս զՊողոմէոս փիլոմետրն պէտք
է հասկնալ , կ'ըսէ Յովսէպոս պատմիչն
(ընդդէմ Ապիոնի , գիրք Բ .) « փիլոմե-
տոր Պողոմէոս և կին նորա կղէոպա-
տրայ՝ զամենայն թագաւորութիւն իւ-
րեանց հաւատացցին Հրէից . և զօրա-
զուովք զօրուն էին Ռնիսա և Դասիթէոս
Հրեայք » : ուրեմն կը նոյնանայ վերին
Պողոմէոսն այս վերջնոյս հետ : Եւրայ
թարգմանիչն հմուտ է նաեւ յունական
քերթուածոց և լեզուի , նմանապէս
Առակաց թարգմանն . իսկ ասոնց իրար
մէ զանազանութիւնն կը կայանայ շատ
անգամ բառից պէսպէս թարգմանու-
թեանն մէջ , յունաբանութեան մեծ
տարբերութեանն՝ որ կը տեսնուի յայս
գիրս : Այս յունական Եօթմասնից

թարգմանութիւնն, պատճառ եղաւ ուրիշ զանազան թարգմանութեանց ալ, որով մեղմով սկսաւ բովանդակ ամենայն լեզուաց մէջ տարածուիլ Սուրբ Գիրքն իւր համբաւումն և մեծութեամբն: Սուրբայն ըստ բաղմանալ թարգմանութեանց՝ կ'աճէին նաև տարբերութիւնք և հոկանակութիւնք իմաստից, թիւր մեկնութիւնք և սխալ վարդապետութիւնք: Եւ այս ծուկութիւնք աւելի ըզդալի սկսան ըլլալ, երբ Նոր կուսակարանք ալ յրանալով, ճշմարիտ և անասան հիմն դրուեցան Քրիստոնէութեան, և երբ, Քրիստոսի եկեղեցին իր ձեռքն առնելով այս առանդն և իր օրինաց գիրքն, տիրաց միանգամայն անոր հեղինակութեանը և իմաստից: Քրիստոնէութեան առաջին օրէն յայտնի եղան Առաքելոց հետ նաև սուտ առաքելք, թիւր իմաստից մեկնիչք, զորս եկեղեցին ալ իւր հեղինակութեամբն սկսաւ մտքոյն իւրովել: Եւ ասով ահա ձևացան ըստ եկեղեցւոյ ճշմարիտ դատաւորութեան, Կալուստականք և Արիւստք կոչուածքն, և կանոնականք ալ՝ յառաջին և յերկրորդ գասա զատուեցան: Բաց աստի՛նակ շատը՝ ի հարց եկեղեցւոյ արեցին իրենց գրիչներն ընդդէմ զանազան հերձուածողաց մեծագործ երկասիրութեամբք: Երանօթք են արդէն Որողինի բաղմահոյակ աշխատութիւնքն, զոր ըրաւ ի կարգաւորութիւն թարգմանութեանց Աստուածաշնչի: զանազանելով իւրաքանչիւր թարգմանութեանց տարբերութիւնքը և նշանակելով աւելին կամ պակասը պէսպէս նշանակելով. սա եօթմասնաւորին և Արիւստայն և Սիմաքոսին և Թէոփիտոսին թարգմանութիւնքն, և յԱրտիս Նիկիայոյեայ և Երիթովի օրինակներն միատեղ կարգաւորելով շարեց, որպէս զի իւրաքանչիւրին իրարմէ ունեցած տարբերութիւնքն յայտնի երևան և ասով իր գործն կոչեցաւ վեցիկեան՝ եկեղեցւոյն գրեանց մեծ փոյթ ցուցուց նաև Պամփիլոս երևելի վկայն՝

1 Եւսէք. եկեղ. պատմ. Զ:

սիրելին Եւսեբեայ կեսարացւոյն, որուն համար կ'ըսէ ինքն Եւսեբիոս, թէ բոլոր եկեղեցական մատենագրաց գրեանքն ի մի ժողովեց և պահեց: Երթալով կը շատնան Սուրբ Հարց մէջէն աւելի կամ պակաս մտուութեամբ աշխատասէրք ի Սուրբ Գիրք. ոմանք Յառաջաբանութիւններ կամ Նախադրութիւններ գրենելով, այլք ցանկերով դարգարելով, ոմանք տուններն և տողերն համբերով, ուրիշներն ալ ծանօթութիւններով ճախացնելով: Ո՛վ կ'անդիտանայ այնչափ մեկնութիւնքն և լուծմունքն, որոնցմով գրեթէ տարիներ և դարեր մաշեցուցեր են Ս. Հարց ի բնմ. բովանդակ գործք և երկասիրութիւնք Ս. Ասկեբեանին ի մեկնութիւն կայանայ, ի Երանօթք մինչև ի թուղթս Առաքելոց. Ս. Եպիփան զՍաղմոսս կը պարզէ և կը մեկնէ. Ս. Եփրեմ՝ զԱւետարանս, ըզթուղթս և զհին կտակարանս ճոխ ճոխ կը լայնէ, կ'ընդարձակէ. ասոնց նման զեռ շատերն ալ: Իսկ Նախադրութիւն, զոր գրեթէ ամեն գրոց առջև կ'ընթեռնունք պարզ և ողորկ իմաստիք՝ Եւթաղեայ կընծայուին, այն Եւթաղիոսն Աղքատիցիոյն, որ աղքատաւ հինգերորդ դարուն մէջերը՝ ինչպէս կը կարծուի, և շարագրեց նաև Նոր կտակարանին թղթոց Ստիքեոն. որուն այս է պատմութիւնն: Որովհետև առաջինքն կը գրէին առանց բացատի և ընդհատի, և չունէին ոչ կէտ և ոչ նշան մը հանգիստ առնելու, ինքն Եւթաղիոս մտածեց նախ, որ ի դիւրութիւն ընթերցողաց տող տող բաժնէ զգիրս Նոր կտակին, և այս բաժանմունքն կոչուեւ

1 Եւթաղիոսի համար կ'ըսէ Կայսերաց պատմութիւնն ըստ մեր ձեռագրաց. «Ի սոցա (Ոնորոսի և Արիստիդէ) երկրորդ ամին եկև Եւթաղ աղքատագրացի՝ որ հրաշքան յօրինուածովք զսուրբ առաքելոյն Պաւլոսի և ԶԹործոց առաքելոյն և զեօթանեցունց թղթոցն կաթողիկէայց զառաջարանս և զգլխոս և զմասնաւորս և զվկայութիւնս և զտունս՝ կարգեաց յաղագս հերձուածոյն որ էին Կաղթոսի և Կարպոկրատեայ, Կոթորոսի և Նիգորոսի, որ ասոսկ մարդ ասէին Քրիստոս, և զվկայութիւնս որ վասն Քրիստոսի խոսէին, և զհին կտակարանսն ոչ ընդունէին»:

ցաւ Ստիք կամ Ստիքեր, որ յետոյ կամաց կամաց կէտերու վերածուեցաւ. և թերեւ իրենն է այն սակաւատող դիմաւորութիւնն զոր մեր աստուածաշունչ ձեռագիրք կու տան մեզի. « Գրեցի և կարգեցի ըստ կարի ստիքերովն զգիրս Պաւղոսի առաքելոյ, յօրինեալ և դիւրահաս ընթերցուածովք եղբարցդ մերոց, յորոց յամենեցունց չմեղադրուի իմն յայնցմ, զի աղօթիւք որ վասն մեր լինիցին, զգիւնանին ձեր ըստ իս ընդունիցիմ:

« Ընդօրինակեցան զիրքս այս ըստ կետարացոց օրինակաց որ կան յարկեզս գրոց սրբոյն Պամփիլեսայ՝ իւրովք ձեռք զրեալ:

« Թելադրութիւն:

« Գլխաւոր եմ, և աստուածեղէն կրօնիցն վարդապետ, եթէ ումք զիս յաշօթ տայցես, ազնիւ օրինակ փոխանակ ընդ իմ աւելուցուս, զի հատուցանողքն չարք են: Պատարանի. Գանձ ունիցի զքեզ հոգեւոր բարութեանք և ամենայն մարդկան ցանկալի յօրինուածովք և պէսպէս զարդօք զարդօքեալ. այս առեմ ճշմարտութեամբ. ոչ տաց զքեզ վայրապար ումք յանթօթ. և ոչ դարձեալ նախանձեցոյց ընդ օգուտ ուրօք. այլ յորժամ տաց զքեզ յանթօթ սիրելեաց իմոց, ազնիւ օրինակք փոխանակ առից ք:

Պամփիլեսայ կոչուած օրինակքն են անշուշտ վերոյիշեալ Պամփիլեսի վկայի ժողովածոնքն. բայց թէ այս փոքրիկ խօսքն առ ճշմարտած է՝ չենք կրնաւ ըսել. թերեւ ուրիշ ձեռագրաց մէջ յայտնադոյն բան մը աւելի գլուխուի, զոր մենք չկրցանք գտնել: Ասկայ նոր կտակին համար, եր գտնենք դարձեալ 'ի մեր ձեռագիրս՝ Յուդիանայ աղիկաւանցոյ յառաջարան 'ի զիրս Յսրայ, բաց 'ի բուն յառաջարանէն: Այսպիսի երեւելի անուանց հետ հարկ է որ յիշատակենք աւելի հնագոյն գտնէ ըստ անուան՝ անձ մը, որ մեծ օգուտ մ'ալ աւելցուցած է և դիւրութիւն մը 'ի նոր կտակարանս, կամ յատկապէս խօսելով 'ի Չորս Աւետարանս, զոր միշտ պարտականութիւն ունի կրկնել ընթերցուել ըստ աւելցուց պատշաճին: Այս անձն է Ամոն կամ Ամոնիոս, որուն անունը շատ քննադատական մէճեր յարոյց մեր օրերն. վասն զի իրեն անունովն յիշատակուած գրեանքն քրիստոնէի գրուած ըլլալով, իսկ միւս Ամոնիոս՝ որ և Սակկաւ, հեթանոս միացեր էր միշտ, արդի քննադատք աւելի հակամէտ երեցան կրկին նոյնանուն Ամոնիոս համարելու, մին հեթանոս և միւսն քրիստոնեայ, երկուքն ալ ժամանակակիցք և բարեկամք Եւսեբեայ և այլոց: Արդոյն անձն նպատակ ունեցաւ իրեն՝ Չորից աւետարանաց Համաբարբառ մը յօրինելու, և առաւ հիմն Մատթեան աւետարանն, և անոր վրայ յարգարեց միւսներն: Թէպէտ Ամոն աղեքսանդրացոյն այս գործը չունինք ձեռքերնիս բուն ընտելովն՝, սակայն նոյն նիւթոյ վրայ ուրիշ փոքրիկ թուղթ մը ունիք, որ զրեթէ մեր ամեն Աւետարանաց ձեռագրաց մէջ կը գտնուի յառաջ քան զՉորս աւետարանն, և կայ նաև յոյն ձեռագրաց մէջ:

« Եւսեբի՝ կարպիանոսի սիրելի եղբոր 'ի Տէր, ողջոյն: Ամոնի աղեքսանդրացոյ բազում աշխատութեամբ և ճշգրտութեամբ 'ի մէջ առեալ, զառ 'ի չորիցն եթող մեզ զաւետարան Մատթեան աւետարանին զհամաբարբառս այլոց աւետարանչացն զգրուակս եղեալ առընթեր միմեանց: Արդոյն զի 'ի հարկն դիպել շարի կարգի երիցն ևս ապա կանոնելոյ որպիսի ըստ միայտընթերցուածոյն: Արդ զի ողջանդամ և զայլոցն ևս զհնաւ զմարմնոցն և զշարի ունիցիս գիտել զյանցնիւրան ըստ իւրաքանչիւր աւետարանի 'ի տեղիս յորս նոքին ածան, ասել ճշմարտասիրութեամբ 'ի յաշխատասիրութենէ յա-

1 Թէպէտ չունինք յոյն բնագիրն, բայց կայ հին թարգմանութիւն մը այս գործոյ, որ ունի մակագիր. « Աւետարանական պատմութիւնք ըստ չորից աւետարանաց շարադարեալ 'ի հատուկութեամբ Ամոնի աղեքսանդրացոյ, 'ի յունէ յեղեալ 'ի ձեռն Ռիթմուրալ Լուկինիոսի »:

առաջագոյն ասացելոյ առնն առեալ պատճառս ըստ այլում գումարութեան կանոնս Ժ. Թուով գրոյմեցի քեզ ներքե նախարգեւսս : Որոց առաջինն ունի զթիւս յորս վճանգոյնս միմեանց ասացին չորեքեան . Մաթէոս , Մարկոս , Ղուկաս , Յովհաննէս . երկրորդն՝ յորս երեքն , Մաթէոս , Մարկոս , Ղուկաս . երրորդն՝ յորս երեքն՝ Մաթէոս , Ղուկաս , Յովհաննէս . չորրորդն՝ յորս երեքն՝ Մաթէոս , Մարկոս , Յովհաննէս . հինգերորդ՝ յորս երկուս՝ Մաթէոս , Ղուկաս . վեցերորդ՝ յորս երկուս՝ Մաթէոս , Մարկոս . եօթներորդ՝ յորս երկուս՝ Մաթէոս , Յովհաննէս . ութերորդ՝ յորս երկուս՝ Ղուկաս , Մարկոս . իննբերորդ՝ յորս երկուս՝ Ղուկաս , Յովհաննէս . տասներորդ , յորս իւրաքանչիւր ուր ի նոցանէ վասն իրիք ինչ առանձինն գրեաց : Արդ այս է ի ներքոյ կարգելոց կանոնաց պատճառ , և յայտնագոյն պատմութիւն նոցա է այսպէս . ի վերայ իւրաքանչիւր չորեքունց աւետարանաց թիւ ինչ առնթիւ կայ , ըստ իւրաքանչիւր մասին սկսեալ յառաջնումն , ապա յերկրորդէն և յերրորդէն , և յառաջ կարգաւ խաղացեալ ընդ բունաւ մինչև ցկատարած գրոցն : Եւ ըստ իւրաքանչիւր թուոյ որ ցուցանէ թէ յորում ի տասնեցուն կանոնաց կայցէ թիւն : Այսպիսի ինչ . եթէ առաջինն , յայտ է թէ որպէս յառաջնումն , և եթէ երկրորդն՝ յերկրորդումն , և այնպէս մինչև ցտաննսին : Արդ եթէ բացեալ զմի ի չորից աւետարանացն յորոյ վերայ և կամիցիս կալ , յորում ճառագլխի կամիցիս գիտել , եթէ ո՞րք են զոր հանգոյն միմեանց ասացին . և զանցնիւրսն յիւրաքանչիւր տեղիս գտանել՝ յորս ըստ նոսին աման , զոր ճառագլուխ և ունիցիս՝ առանձի զառաջակալ թիւն խնդրեացես զնա ի ճակատ կանոնին ընդ որ կարմրագորովն ներքնագորոյն իյուշանիցէ . և հասցես գիւրաւ ի վերայ և յառաջագոյն գրելոց ի ճակատ կանոնին , թէ քանեւորդք և ո՞րք իցին ասացեալ յորոց խընդրեան . և կացես ի վերայ թուոց և այլ

լոց աւետարանացն ո՞րք ի կանոնն իցեն . զոր թիւ և ունիցիս զառնթեւեւաւ կցացն , խնդրեացես զնա ի ներքա ի յանցնիւրսն յիւրաքանչիւր աւետարանի տեղիս զհանգոյնսն ասացեալսն նոցա գտցես : Ողջ լեր Եւսթիքի մէջ կը դնեն ձեռագիրք իւրաքանչիւր ցանկերն հայկական տառերով ի մէջ , և նոյն տառերն կը գտնուին նաև աւետարանաց իւրաքանչիւր լուսանցքի : Այս է ահա ամենեան կարգաւորութիւնն , զոր բոլոր հնութիւնն ընդունած կը գործածէր :

Այսպէս առաջին դարն քրիստոնէութեան վարէին զայս կարգ և դասաւորութիւն , զոր ցայժմ տեսանք . բայց մեք աւելի հետաքրքրական մաս մը քննելու կը փափաղինք , և այն է Հայկական թարգմանութիւնն , զոր օտարք և մերք կոչած են յիշոյ թարգմանութեանց , և զոր սիրով կ'ընդունին ազգասէր լսելիք և միտք :

Երբ աստուածային շնորհն լուսաւորեց մեր ազգին կրկին ջահերն՝ որ փայլին Այրարատայ բազմայեղանակ կամարին վրայ , կարծես նոր թմրութենէ զարթուցեալ ազգն իմացաւ իրեն նկատման տառապանքն , և թեւաւորեալ ինքն ալ նման ուրիշ ազգաց կը զգարնուի ուժ և զօրութիւն , կամ փայլակ մը՝ որ քիչ պիտի տներ և կարճ շրջան մը ունէր պայծառութեան : Ժամանակին միայն գիտունն յազգիս , Ս. և մեծն Սահակ ձեռք կը զարնէր , ինչպէս յայտնի է ի պատմութենէ , թարգմանեալ սուրբ Գիրքն ի յունէ ի հայ թախանձանք բոլոր հայ ազգին : Բոյց հարկաւ սուրբ գիրքն ըսելով , հարկ չէ բոլոր գիրքն հասկնալ . փասն զի շատ զժողովուրդ ալ էր մէկ անձի այնչափ գիրք միանգամայն թարգմանել . ուստի կամայ և ակամայ հարկ է դնենք զանազան թարգմանիչս և ոչ մէկ միայն : Եւսթիքի գրոյն , կը պատմէ թորեանացին , և իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ , խորհրդաբար սկսանելով յԱռաակաց , խովանդակելով զքսան և երկու յայտնիս և . զնոր կը

տակս յեղուլ 'ի հոյ բան. նա և աշա-
կերտք նորա Յոհան եկեղեցային և Յով-
սէփ պաղնացին » . բայց ուրիշ տեղ մը
կ'ըսէ նոյն պատմագիրս, « ինքն (Ս. Մես-
րոպ) դառնայ 'ի Հայս . և գտանէ զմե-
ծն Սահակ թարգմանութեան պարա-
պետ յասորւոյն » . յոչ լինելոյ յունի » :
ի՛նչպէս կրնան միաբանիլ իրարու հետ
այս երկու խօսքերս, եթէ առաջինն 'ի
յունէ հասկընանք, ինչպէս պատմու-
թեան կարգն կը բերէ . վասն զի բո-
թորենացոյ պատմութեանն, նախ 'ի
յունէ թարգմանուած կ'ըլլայ, և յետոյ
յասորւոյն : Ասոր մեկնութիւնն այս
թերևս կարենանք տալ, որ թէպէտ Ս.
Սահակ սկսած էր 'ի յունէ թարգմա-
նել, բայց յետոյ Հայաստան չփոխե-
րով աղմկելով խափանուեցաւ յունա-
կան ուսումն, որով ստիպուած ըլլալ
թերևս մերս Ս. Սահակ փոխանակ յու-
նին յասորւոյն թարգմանել : Եւ արդեօք
այսօր մեր Աստուածաշունչ գրոց թարգ-
մանութեան մէջ չկան այնպիսի կը-
տորուանք որ աւելի յասորւոյն թարգ-
մանուած են քան 'ի յունէ . զոր թէ-
պէտ մենք չենք կրնար հաստատապէս
վճռել, բայց կրնանք ամենահաւանա-
կան համարել որ ասորական թարգմա-
նութեան հետքեր կան 'ի մեր թարգ-
մանութեանս : Գրիգոր Նարեկացին, որ
իւր սքանչելի մեկնութիւնն երգոց եր-
գոյն աւանդած է մեզի գեղեցիկ զանձ
մը, խօսելով տեղ մը իմաստոյի խըրթ-
նութեան վրայ կ'ըսէ . « Զի ասէ երա-
նելի վարդապետն տիեզերաց Յոհան,
թէ յեբրայեցոց լեզուէ 'ի հելլենացի
թարգմանեալ, և 'ի հելլենացոյն չկա-
րէ զբանն բովանդակ բերել . մանաւանդ
որ առ մեզս՝ որ 'ի յոյն լեզուէն կամ
յասորւոյն թարգմանեալ՝ մտայլ ա-
ռեալ է 'ի հայ լեզու » : Ահա այսպիսի
անձի մը վկայութիւնն բաւական հա-
ւաստիք մը կրնանք համարիլ կարծե-
լու թէ երգ երգոցն յասորւոյն թարգ-
մանուած է և ոչ 'ի յունէ : Արդեօք Մա-
կաբայեցոց գրքերն ալ յասորւոյն չեն
թարգմանուած : Ինչ որ ալ ըլլայ, այս-
չափ յայտնի կ'երևի որ Հնդգամաեանն

Մովսեսի, Դատաւորք, Թագաւորու-
թեանց գրքերն, Առակք և ոմանք 'ի
մարգարէից, և չորս աւետարանքն ե-
լած ըլլան 'ի գրչէ Ս. Սահակայ . վասն
զի ասոնք յամենայն ձեռագիրս մեր
միապէս և համաձայն կ'ընթանան, իսկ
յայս կը գտնուին տեղ տեղ զանազա-
նութիւնք . որով թերևս աւելի բնական
ըլլալ կարծել թէ երկրորդական թարգ-
մանիչք ըլլալով՝ համարձակեր են յե-
տինք փոփոխութիւններ մտցնել իսկ
Յայտնութեան գրոց դարով յայտնի է
որ շատ յետին է թարգմանին . և նոյն
գրոց յիշատակարանն կ'ըսէ թէ լամբ-
րոնացին ըլլալ թարգմանն կամ յերիւ-
րոյն . « ստուգարան արարաւ՝ վերջս
տին երկրեալ 'ի Հելլենացոյն իմով
նուաստ Ներսիսի թարգմանութեամբ .
ընդ որ և ղըննութեամբ մեկնութիւն
սորին ածի յեկեղեցիս Հոյոց » : Ուրեմն
խօսքերնիս համառօտելով, իբրև թարգ-
մանիչ սուրբ Գրոց կրնանք համարիլ,
Ս. Սահակ, (թերևս և Ս. Մեսրոպ),
Յոհան եկեղեցային, Յովսէփ Պաղնացի,
Մովսէս Խորենացի, Եղիսիկ, և Ներսէս
լամբրոնացին . միայն կը մնայ որոշել
իւրաքանչիւրին մասերն : Այս նկատ-
մամբ բոլորովին անձանօթ մնալնուս
պատճառն այն է, որ չունինք ձեռքեր-
նիս այնպիսի հին ձեռագիր մը սոյն
գրոցս՝ որ կարենանք աւելի դատա-
ստան մ'ընել, կամ յիշատակարանով մը
լուսաւորուիլ՝ ինչպէս ուրիշ շատ ձե-
ռագիրներու . Սակայն յետ երանա-
շնորհ թարգմանեալ՝ պարտական ենք
նաև անոնց որ երբեմն երբեմն մեծ ե-
ռանդն և փոյթ ցըցուցած են այս Գը-
րոցս օրինակելուն կամ սրբագրելուն
մէջ : Ահա ասոնց օրինակ կը յիշուի Յա-
կոր անուամբ մէկն և իւր ընկերն Գի-
նէոս կոչուած, որ զԱստուածաշունչս
սրբագրելու աշխատած են . վասն զի
կ'ըսէ ձեռագիր յիշատակարանն . « ըզ-
մեղաւոր Յակորս և զձնոյս իմ յիշեցէք
յաղօթս ձեր . ընդ նմին և զտէր Գի-
նէոս բարեալէր քահանայն, որ աշխա-
տեցաք գրոցս սրբագրելն . թվին ոճիք .
յունիսի Դ » : Ուրիշ յիշատակարան

մ'ալ կը յիշէ զայլ ոք Յովաննէս վարդապետ ըսելով. « Հեղահողի վարդապետն Յովաննէս, որ բազում աշխատանս կրեաց 'ի վերայ սուրբ գրոցս ։ Ասոնք են օրինակողք և սրբազրողք, որոնց յիշատակարանքն կան առանձինն, իսկ Սարկաւազ վարդապետին համար կ'ըսէ Մխիթար Այրիվանեցին իր ժամանակադրութեան մէջ. « Կարգադրութիւն Գրոց սրբոց, սրբ ստուգաբանեցան 'ի Սարկաւազ վարդապետէն, և գրեցան յինէն 'ի տէր Միխիթար վարդապետէն պատմագրէ 'ի մին առ մի յաւուրս ճէ ։ Հետաքննական է Սարկաւազայ այս աշխատութիւնն ։ Նախնեաց այսպիսի փոյթն և ջանքն տեսնելով և կարգալով 'ի գիրս, կը զարմանանք թէ ինչպէս արդիւր ոմանք թողով մեր այսպիսի անհամեմատ գանձերն՝ զոր հարքն մեզի համարեք են, կ'ախորժին աւելի առ օտար լեզուագրութիւնս գիմելու. եթէ փափաքին սուրբ գրոց բնիկ իմաստից՝ կարդան զձեռագիրս, որ շատ տեղ կը նշանակեն նաև օտար թարգմանութիւններն 'ի լուսանցս գրոց. իսկ եթէ նորութեան կը փափագին միայն՝ կը խնդրենք որ զսուրբն ընդ անսրբոց չըխառնեն, ըսել կուզեմ, նախնեաց հարգատ իմաստներն չը քաշկուտեն թիւր մեկնութեամբք ։ Ըլլան իրաւորն նոր տպագրութիւնք գրոց, զայս մենք տւել կը փափագինք, և կը ցանկանք յայսմ արևմտեայց նախանձաւորք ըլլալու. բայց ոչ երբէք յանձն կ'առնուինք զարդիւնս նախնեաց տապալելու ։ Եւ այս անոր համար կ'ըսենք, վասն զի լսելիք և տեսանք որ ոմանք կը յանդգնին նոր հրատարակում մը ընել սուրբ գրոց՝ բոլոր սխալ գտնելով՝ յայսմ զնախնիս մեր ։ Սակայն մեր արդի ազգային յառաջագիւղութեան ճամբան կարծեմք որ զեռնուր չի տար այդպիսի քննութեանց. բայց եթէ սպասելով որ կրնայ ուրիշ ժամանակ մը հասնիլ որ աւելի կարող ըլլայ այդմ ։ Ստոյգ է որ քննութիւնն և դիտողութիւնն կ'ընէ զմարդ գիտուն և տեղեակ. բայց ատոր ալ հաս-

նելու համար կարևոր է յարատեւութիւն և ուսումն ։ Ղազար փարպեցին որ տեսած է ազգերնուս ամենէն գրական և ուսումնական դարն, կ'ըսէ թէ « մեր երանելի վարդապետքն՝ զամենայն զկտակարանս եկեղեցւոյ երիցս և չորիցս ուսուցեալ է մեզ 'ի սկզբանէ մինչև 'ի կատարած գրոցն՝ համարս պահանջէին 'ի մէնջ զնոյնս, և իբրև գիւղութի սաղմոսն՝ պաշտել մեզ հարկաւորէին ։ Այսպէս բոլոր մեր հարքն սովոր և սովորեցուցեր են իրենց մայրենի լեզուն. իսկ այսօր աւար մէջ դարձնք, ձեռք բերողին քաջութիւնն կը կախուի, Գալով մեր խօսքին ընթացիցն, յետ ժամանակաց երբ լատինաց աստուածաշունչն ծանօթացաւ ազգերնուս, նորնոր փոփոխութիւնք կը սկսին, յերևան գալ և մոռնել 'ի մեր աստուածաշունչս. և այն յառաւել ջանից մերայնոց, մանաւանդ 'ի դասաւորութիւնս գլխոց և համարոց, որուն պատմութիւնն կ'ընէ ինքն իսկ ձեռագիր մը. « ցանկով և համարագրով և ոսկեգիր այբուբենի միջոյցով զարգարեցաւ զսական դիւրագիւտ իննելոյ բանիցն աստուածային ։ Զի թէպէտ կայր մեզ յառաջագոյն կարճառօտ ցանկ 'ի նախնեացն մեր և 'ի տէր Գալիթ իմաստուն քահանայէն, բայց ցիր և ցան գրով յայլ և այլ տեղիս, բայց մեք աշխատութեամբ ժողովեցուք 'ի մի տուփ իբրև զփունջ մի վարդից և ըստ այբուբենից 'ի վերայ շարագրեցաւ վասն այլ առաւել դիւրագիւտ լինելոյ ուսումնասիրագոյ, եւ զմիւս ցանկն որ զկնի նորին արարի՝ առի զօրինակն 'ի լազինացուց, նաև զգլխահամարքն և զփոքրահամարքն և զայբուբենի միջոյցն և զաստղանշանն, նաև զվկայութիւնս համաձայնութեամբ՝ որ միմեանց կուհամեմատին իբրև զարս մարդարտաց ընդ ականց պատուականաց, և գծագրեցի իմ հողանիւթ մատաւրս 'ի լուսանց աստուածաշունչ մատենիս ։ Բայց զփոքր համարն կարմրագրով արարի, զի մի չփութեային համարս գիրսն մեր ընդ գրութեան նախնեացն

մեր. զի մեր համարքն յառաջ կ'ընթա-
նան ըստ մերուսման ոճի, և նոցայն կ'ըն-
թանայ ըստ իւրեանց կարգին, և թէ
գլխաւոր համարքն սեաւ եմք գրեալ,
բայց քի ի վրայ նոցա գնելով ցուցանէ
թէ ֆռանդայ է գլուխն. զի նոցա աս-
տուածաշունչն բոլոր այսպիսի համա-
րագրովս կու ընթանայ, որպէս որ տե-
ղեակ և դիտակ եմք ք:

Ըստ վկայութեանս ճամարտեալ կը
տեսնենք զատոնք և յամենայն աստուա-
ծաշունչս մեր. ուր ի լուսանցս կը նշա-
նակուին ֆռանդ և հայ գլխակարգու-
թիւնքն, երբեմն նաև Ալիւղասայ, Սի-
մաքոսի և Թէոդոտիոնի թարգմանու-
թիւնները¹ և անոնց դորձածած բա-
ռերը. կը դորձածուի նաև զանազան
նշաններ, նման Որոգինեան նշանաց,
ինչպէս են * և †, որոնք կը ցուցնեն
կամ նոյն տողից անհարապատութիւնն
կամ աւելորդ ըլլալն:

Մինչդեռ Աստուածաշնչից վրայ է
խօսքերնիս, տեսնենք վերջին խնդիր
մ'ալ, որ թէպէտ յինքեան ծանր է և
դժուարին և երկայն խօսից կարօտ, սա-
կայն կը ջանանք մենք ալ մեր կողմէն
համաւաճախ ապարդել. և ինչ որ այլք
ընդհանուր Աստուածաշնչից վրայ խօ-
սելով երկարեն, մենք միայն ազգա-
յին և մեր հայրական քննութեամբ շա-
տանանք: Այս խնդիրս է ուրեմն եր-
կրորդականոն գրող, և ի վերջոյ մեր Ա-
ւետարանաց ամբողջութեան խնդիրն:
Նկատմամբ առաջնոյն յայտնի է թէ
զորս կը համարէին Հրէայք իւր կանո-
նականս, որուն վկայեն Յովսեփոս, Փի-
լոն, Մեթիստոն, Որոգինէս, Հերոնիմոս և
թալմուան Հրէից. և են. Հնգամա-
տեանն Մովսիսի, Յեսու, Դատաւորք,

¹ Այս զանազան թարգմանութեանց օրինակ
մը ունենք ի Ղազար Փարպ. 115. ուր յիշելով
Յապոնոսին տող մը կ'ըսէ «Յագեցան կերպ-
կրօք, որ միւս ևս թարգմանիչ խողենեաւ ասէ,
և թողին զննացուած տղայոց իւրեանց»։ Եւ
այդ միւս թարգմանիչն. յունական բառին մէկ
գրի տարբերութիւնէ անալ է կ'ըսէ զանազանու-
թիւն մ'է, զոր կը գտնենք նաև ի Ս. Օգոստի-
նոս, յԱւետարան և ի Հռոմէոյայն Ապոկալի-
րոսն, և յԱլեքսանդրոսի մէկնութեան:

Հուլիս, չորս Թագաւորութեանց, կըր-
կին Մնացորդք, եղբ, Նեեմի, Սաղմոսք,
Յոր, Առակք, Ժողովող, երգ երգոց,
Եսայի, Երեմիա, Եղեկիէլ, Դանիէլ և
ԺԲ փոքր մարգարէք: Ատոնք ըստ կա-
նոնաց Հրէից. իսկ յունական կանոնն
բայ յասոնց կ'ընդունէր ևս՝ Բ գիրք
Մակարայեցոց, Տոբիթ, Յուդիթ և Բար-
ուք, և Դանիէլի և Եսթերայ երկրոր-
դականոն գլուխներն. բայց այս կար-
գադրութեան ժամանակն անձանթ է
մեզ Դանիէլի երկրորդականոն գլուխքն
են. Որհնութիւն երկից մանկանց, պատ-
մութիւն Շուշանայ, և Վիշապին ու Բե-
լայ: Բայց երկրորդ մասն խնդրոյս աւե-
լի հեապքնելի է մեզ, այս է Աւետա-
րանաց ամբողջութիւնն, յորում կրնան
մեզի նպաստել նաև հայկական ձեռա-
գիրք: Մեր դարուս մէջ երևելի քննա-
դատ և բանասէր մը, որ իր անխնջ
վաստակովք մեծ և անհամամառ ծա-
ռայութիւն մը մատոյց հմտութեան,
մանաւանդ սրբազան զրոց նկատմամբ,
անուանի գերմանացիին Կոստանդին
Դիլշէնտօրֆ, սուրբ Աւետարանաց մէջէն
երեք կտոր բան իւրեւ անվաւեր դուրս
հանց իր տպագրութեանց մէջ, այս
են՝ Մարկոսի աւետարանին վերջի եր-
կոտասան տունքն, սկսեալ ի 9 համա-
րէն մինչև վերջն. երկրորդ՝ Յոհաննու
աւետարանին Ե գլխուն այն տեղերն որ
յետ այն խօսքիս՝ որ ակն ունէին չրոցն
յուզգերոյ. և երրորդն՝ Յովհաննու աւե-
տարանին Է գլխոյն 53 համարէն մինչև
ի Գլ. Ը, համար 11, որ կը պարունա-
կէ շնացեալ կնոջ պատմութիւնը, իր
գլխաւոր պատճառն այս է անվաւեր
համարելուն զայս, որ իր վերջին գտած
հին յոյն ձեռագրաց մէջ չեն գտնուիր.
և իրացնէ կը վկայեն Եւսեբիոս և Ս.
Հերոնիմոս թէ Մարկոսի վերջին մասն
գրեթէ ամեն յոյն ձեռագրաց մէջ կը
պակսի, և ահա Հերոնիմոսայ խօսքն
գրելով առ Հերիթիա, «կամ ոչ ընկա-
լաք գլխայնութիւն Մարկոսի որ յօրի-
նակս ոմանս երեկ և ամենայն յոյն
մատենանք ոչ ունին զայս զլուխ բանի

ի վերջն Մարկոսի ։ Բայց հակառակաւ կ'ընդունին բազումք ՚ի Հարց, ինչպէս Ս. Ամբրոսիոս, Ս. Օգոստինոս, ֆոտոս և այլք, և նոյն ինքն Հերոնիմոս ուրիշ տեղ ալ վկայութիւն կը բերէ առ կէ : Իսկ շնայեալ կնոյ պատմութիւնն բազմազոյնք ևս մէջ կը բերեն և կը մեկնեն. նմանապէս Ս. Ամբրոսիոս և Կիւրել Աղեքսանդրիոյ, Ս. Թոմ. Ոսկեբերան, Թէոփիլակտոս և Եւթիմիոս աշաւերաք Ոսկեբերանին կ'ընդունին այն տողն ուր կը խօսի՝ Հրեշտակին ՚ի լուր իջնայն և յուղեն¹ : Իսկ մեր հայ ձեռագիրք որ կարծիքն կրնան պաշտպանել, Դիշէնտորֆինն եթէ անոր հակառակն : Զարմանալի բան մ'է որ գրեթէ բոլոր մեր ձեռագրաց մէջ կը տեսնենք որ շնայեալ կնոյ պատմութիւնն և Մարկոսի վերջն՝ բաժանեալ է աւետարանաց կարգէն² : Բայց աւելի զարմանալին այն է որ երկուքն ալ կրկին անգամ թարգմանուած կ'երևին, և ձեռագրաց մէջ եղած թարգմանութիւնն աւելի ընտիր է քան տպագրեալն՝ որ յետին ձեռագրէն առնուած է : Արդ որպէս զի ընթերցողք տեսնեն յայտնի երկու թարգմանութեանց ալ զանազանութիւնն, կը դնենք հոս հնազոյն ձեռագիրներէ քաղելով :

Ի վերջ չորից աւետարանաց կը դնէ ձեռագիր մը, որ դրուած է ՚ի թուին 1230 (ՏՅ. ԽՅԹ), գրեալ ՚ի Թէոդուպոլիս և գրողն Գրիգոր :

¹ Այս խնդրոյ վրայ երկայն տեղեկութեան և վերջն յակագողքն կը գրենք՝ ընթերցող Դիշէնտորֆայ գործերն, և Etudes religieuses, historiques et littéraires կոչուած տետրերն Բարիէ հրատարակուած 1876, novembre, 1877, janvier, février.

² Ի հաստատութիւն այս կարծեաց Դիշէնտորֆի, մեր յետին հեղինակաց մէկն, Մարկոս ձեռն մականուանեալն իր Մարկոսի Աւետարանին մեկնութիւնը կը հասցընէ և կը կնքէ ՚ի բառն «Աի երկնէն», և մեր նշանակեալ գրութիւնը կը պակսի, սակայն մեկնութիւնն աւարտեալ է :

« Իրք կնոյն շնայեալ » :

« Իսկ քահանայապետն և փարիսեցիք բերին կայուցին առաջի Յիսուսի կին մի որ յառաջագոյն ՚ի շնութեան գտեալ էր. և ասնն ցնա. վարդապետ, կինս այս դուաւ ՚ի շնութեան, և Մովսէս հրամայեաց քարկոծել զայսոյի սիրս. իսկ զու զինչ ասես :

Իսկ Յիսուս խոնարհեալ՝ մատամբն զրէր ՚ի վերայ գետնոյն. և նոքա ուղաւսէին նմա թէ զինչ ասացէ : Հայեցաւ ՚ի վեր Յիսուս և ասէ ցնոտա. որ ոք ՚ի ձէնջ առանց մեղաց, արկցէ նախ զքարինս ՚ի վերայ դորա : Եւ Յիսուս դարձեալ խոնարհեցաւ և զրէր ՚ի վերայ գետնոյն, և ընթեռնոյր իւրաքանչիւր ոք զիւր մեղսն : Եւ սխտան ելանել մի ըստ միոյն, սկսեալ ՚ի քահանայիցն : Մնաց Յիսուս միայն, և կինն կայր առաջի նորա : Եւ յորժամ կանգնեաց զղուխն իւր Յիսուս, ասէ ցինին. Թուր իցեն դատախազքն քո. ով ոք դատապարտեցէ զքեզ : Պատասխանի ետ կինն. ոչ ուրեք երևին : Ասէ Յիսուս. և ոչ ես դատապարտեմ զքեզ, յայսմհետէ մի ես մեղանչեր :

Եւ ՚ի միւսում աւուրն իբրեւ եկին առ նա դպիրքն և փարիսեցիքն, դարձեալ նա պատասխանի ետ և ասէ » :

Իսկ միւս խօսքն Յովհաննու ՚ի Եզրէլ խոյն. « Եւ հրեշտակ տեառն ըստ ժամանակի իշանէր յաւազանն և յուղէր զյուրան. և որ նախ ՚ի շարժումն յուրոյն իշանէր՝ բռնէր, ոչ աւելով նշան հիւանդութեան » : այս ամբողջապէս կը պակսի ՚ի մեր հին ձեռագիրս, և յայլն չակերտել դրուած է, իբր թէ անհարազատ ըլլան :

Գալով արդ Մարկոսի վերջի մասին, զայն ալ կը գտնենք ՚ի ձեռագիրս ա :

¹ Այս պատմութեան համար կ'ընէ վարդան ՚ի մեկնութեան Յովհաննու աւետարանին. « Այն շնայեալ կնոյն իբրեւ, որ այլ քրիստոնէսացող ունին գրած յիւրեանց աւետարանին, Պապէսապ ումեմն այսպէրեթի Յովհաննու է գրած, որ հերձուած խօսեցաւ և խոտեցաւ » :

ռանձին նշանակուած. վասն զի Մարկոսի աւետարանն լմնցնելով « զի երկն չէին » բառով, յետ կնքելու զաւետարանն կ'անցնի 'ի միւս էջն առանձին գլուխ կազմելով, և վրան կ'աւելցնէ « աւետարան ըստ Մարկոսի »: Ասոր շարագրութիւնն ալ տարբեր է նոյն վերոյիշեալ ձեռագրին մէջ. և է այս.

« աւետարան ըստ Մարկոսի ».

« Արդ յարուցեալ առաւօտուց 'ի միաշարաթուցն, երևեցաւ նախ Մարեմայ մակդաղենացւոյ յորմէ եհան զեւթն դեռն. և նորա գնացեալ պատմեաց այնոցիկ որ եթէ ընդ նմայն էին, մինչդեռ սգային և լային: Իսկ նոցա լուեալ թէ կենդանի է՝ ոչ հաւատացին: Յետ այսորիկ երկուց ոմանց երևեցաւ այդակերպ ձևով, մինչդեռ երթալին 'ի գեաղ ուրեմն. և նոցա երթեալ պատմեցին այլոց. սակայն և նոցա ոչ հաւատացին: Իսկ յետ այսորիկ մինչդեռ բազմեալ էին մետասան աշակերտքն, երևեցաւ նոցա և նախատեաց զանհաւատութիւնն նոցա և զխստասրբութիւնն, վասն զի յարութեանն տեսաւ և տեսեալն իւրեանց ոչ հաւատացին: Եւ ապա ասէ ցնոսա. Գնացէք այսուհետև ընդ ամենայն աշխարհ և քարոզեցէք զաւետարանս ամենայն արարածոց, և որ հաւատասցէ և մկրտտեսցի՝ կեցցէ յաւիտեան. իսկ որ ոչ հաւատասցէ, դատապարտեսցի. և նշան հաւատացելոցն եղիցի այս. զի առաւմբս իմով զլիւսհարս բժշկեացն, և նոր լեզուօք խօսեսցին, և ձեռք իւ-

րեանց զիժս կալցեն, և եթէ մահու դեղ արբցեն՝ ոչ մեղիցէ նոցա. 'ի վերայ հիւանդաց զձեռս իւրեանց զիցեն և բժշկեսցեն զնոսա:

Արդ տէրն մեր Յիսուս Գրիստոս յետ խօսելոյն ընդ նոսա զայս՝ վերացաւ յերկինս և նստաւ ընդ ալմէ հօր: Իսկ նոցա գնացեալ՝ քարոզեցին ընդ ամենայն երկիր գործակից լինելով տեսաւ և օգնական. և զբան հաստատէին 'ի ձեռն նշանացն որ եթէ առնէին »:

Այս և ասոր նման և այլ մանր զանազանութիւնքն, զոր ընթերցողք կըրնան տեսնել 'ի տպագրեալ աստուածաշուշան մեր, ընդ առաջինն և ընդ վերջինս, թերևս զայլակոչեցունեն զոմանս՝ թէ ինչ յանդգնութեամբ կրնայ համարձակիլ մէկն 'ի գիրս նախնեաց ձեռնամուխ ըլլալ. բայց ահա յայտնի տեսանք թէ որն է յայսմ և մեր նախնեաց ընդունածն, և որն ձեռագիրք միշտ փոփոխութեան ենթակայ ըլլալ, բայց դժուարինն է բուն հին և հարազատն ճանաչել, և յայս խնդիրս՝ բուն յառաքելական ձեռաց գծեալը կարդալ, Շատ անգամ, չեմ ըսեր այս նոր կտակին նկատմամբ, այլ աւելի յայլ գիրս, խաբուած են նաև ամենահմուտ սուրբ Հարքն Եկեղեցւոյ. և 'ի զուր չէ, որ շատք անոնցմէ՝ քանի քանի անգամ փորձեր են հարազատ ընթերցում. ներն անխախտ և անայլալակ պահելու. սակայն այնու հանդերձ դժուարացեր են երբեմն յաջողելու:

— Հ. Ա. ՍՈՐԵՍԵԱՆ

